Baghdasaryan N., Political overtones of the Azerbaijani-Karabakh April war, Erevan, "SUNPRINT", 2019, 135 p. Editor Ararat Vardanyan, PHD in History, Professor

Reviewers Garik Qeryan, Doctor of Political Science, Professor, Khachik Galstyan, Doctor of Political Science, Associate Professor



Վերջերս «Սանտպրին» հրատարակչությունը Արցախի Հանրապետության Արցախի գիտական կենտրոնի և Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի գիտական խորհուրդների որոշմամբ լույս ընծայեց պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Նելլի Բաղդասարյանի մի նոր աշխատություն՝ «Ադրբեջանա-ղարաբաղյան Ապրիլյան պատերազմի քաղաքական ենթատեքստը» ուսումնասիրությունը: Այն նվիրված է 2016 թ. ապրիլի 2-5-ը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության սրման՝ Ապրիլյան պատերազմի քաղաքական համատեքստին: Աշխատանքը պահանջված է, հրատապ և կարևոր մի քանի առումներով. մասնավորապես այն գումարվում է ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խնդրի մասին առկա օտարալեզու գիտական գրականությանը, ուղղված է միջազգային լսարանին, քննարկված հարցերը նպատակ ունեն հնարավորինս օբյեկտիվ տեղեկատվական հոսք ապահովելու: Հեղինակը վերլուծության է ենթարկել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կիրառության մակարդակը, ազդեցությունը, առանձնացնում Ապրիլյան պատերազմի քաղաքական զսպման, ինչպես նաև հակակշռման գործիքակազմը: Աշխատանքն ուղղված է տեսական և գործնական ոլորտի միջազգայնագետներին և տարածաշրջանագետներին, ինչպես նաև հակամարտության խնդրով հետաքրքրվողներին: Ն. Բաղդասարյանը ընդգծում է, որ ուսումնասիրությունը շարադրվել է Ապրիլյան պատերազմի և դրան հաջորդող ամիսների ընթացքում, հետևաբար կրում է ժամանակաշրջանի տրամաբանությունը: Ուսումնասիրության հիմնական աղբյուրներն են համացանցային ռեսուրսները՝ պետությունների և միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքէջերի տեղեկատվությունը, ինչպես նաև առանձին հեղինակային ուսումնասիրություններ: Փաստորեն, հեղինակի կողմից կատարված աշխատանքի նպատակը Ապրիլյան պատերազմի մասին ապագա ուսումնասիրողների համար ժամանակի տրամաբանությունն ունեցող գիտական ուսումնասիրության ստեղծումն է:

Ուսումնասիրության մեջ ներկայացվել է Ապրիլյան պատերազմի քաղաքական ենթատեքստը, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կողմից միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կիրառումը որպես հակամարտության քաղաքական զսպման գործիքակազմ: Անդրադառնալով ադրբեջանա-ղարաբաղյան Ապրիլյան պատերազմի ընթացքում հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների կիրառմանը՝ Ն. Բաղդասարյանը, առանձնացնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության միասնական դիրքորոշումը, գտնում է, որ ապրիլյան և հետապրիլյան քաղաքական գործընթացներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գործելակերպում հակամարտող կողմերին ուղղված հիմնական քաղաքական զսպման լծակն էր ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման և հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքը: Ուսումնասիրության արդյունքում հեղինակն առանձնացնում է՝ «Ինչ վերաբերում է տարածքային ամբողջականության սկզբունքին,

ապա այս դիրքորոշումը բարձրաձայնեցին Ադրբեջանին սատարող պետությունները, ինչը ևս պատահական չէ, քանի որ միջազգային իրավունքի այս սկզբունքը, որ համահավասար հարթակում է մյուս հիմնարար սկզբունքներին, ադրբեջանական կողմը յուրացրել է՝ տարածքային ամբողջականության խախտման սկզբունքը ուղիղ համեմատականով նույնացնելով այսպես կոչված«1991-1994 թթ. ՀՀ կողմից օկուպացված Ադրբեջանի տարածքային կորուստների հետ»:

Որպես հակակշռող գործիքակազմ հեղինակն ընդգծում է համանախագահության ներսում առկա տեսանելի գործընթացները, ռուս-թուրքական և ռուս-գերմանական հակակշիռները. վերջինս դարձյալ պայմանավորված է Թուրքիային ուղղված քաղաքականությամբ: Ռուս-թուրքական հակակշիռների մասին հեղինակն ընդգծում է. «Հատկանշական է, որ ապրիլյան և հետապրիլյան դիվանագիտական գործելակերպում ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության սրման առնչությամբ ռուս-թուրքական հակակշռման դրսևորումների գործելաոճն ու դիվանագիտական լեզուն բևեռացված էր»:

Հեղինակը հատկանշում է, որ խնդիրը՝ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության սրման նոր փուլը, «չգաղտնազերծված դիվանագիտության» հարթակում է: Իսկ ընդհանրացնելով՝ նշում է, որ՝ «Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության քաղաքական զարգացումների քննարկվող ժամանակաշրջանն ամփոփվել է հակամարտությամբ հետաքրքրված պետությունների կողմից դեկլարատիվ հայտարարություններով և որոշ դեպքերում գործընթաց մեկնարկելու պատրանքային գործելակերպով՝ նպատակ ունենալով անմասն չմնալ տարածաշրջանային քաղաքական գործընթացներից»:

Հեղինակը, անդրադառնալով Ապրիլյան պատերազմի փուլում Ադրբեջանի և Իսլամական համագործակցության կազմակերպության համագործակցությանը, նշում է, որ «Ապրիլյան պատերազմը ադրբեջանական կողմի ջանքերով տեղափոխվել էր նաև Իսլամական համագործակցության կազմակերպության շրջանակներ՝ ձևավորվելով տարածքային ամբողջականության սկզբունքի արտահայտման կրոնաքաղաքական հարթակ»: Ն. Բաղդասարյանը նման տարրեր պարունակող գործելակերպի վտանգավորության մակարդակը բավականին բարձր է գնահատում՝ այն դիտարկելով աշխարհում առկա կրոնաքաղաքական հակամարտությունների համատեքստում, քանի որ խնդիրն արհեստականորեն տեղափոխվում է կրոնաքաղաքական ոլորտ: Հեղինակն այս առիթով ահազանգում է, որ այն ամբողջությամբ արտահայտում է Ադրբեջանում առկա հայատյացության ահագնացող մթնոլորտը:

Հեղինակը, Ապրիլյան պատերազմի և հետապրիլյան ռազմաքաղաքական զարգացումների ենթատեքստում դիտարկում է նաև Արցախի Հանրապետության ճանաչման խոսույթը որպես հակամարտության զսպման լծակ: Ն. Բաղդասարյանն ընդգծում է, որ Ապրիլյան պատերազմի և հետապրիլյան ռազմաքաղաքական իրադարձությունների ընթացքում Ադրբեջանը դիվանագիտական պարտություն կրեց, քանի որ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման վերաբերյալ քաղաքական խոսույթը աննախադեպ բարձր մակարդակի վրա էր: Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը որպես զսպման մեխանիզմ համակարգել է արտաքին քաղաքական, ներքաղաքական, ռազմաքաղաքական գործառույթներ:

Այսպիսով՝ Ն. Բաղդասարյանի աշխատությունը կարևոր, պահանջված և հրատապ է քննության ենթարկված հարցերի շրջանակով և ուղղվածությամբ: Այն լուրջ ներդրում է ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության օբյեկտիվ քաղաքական ընկալումը միջազգային լսարանում ապահովելու գործում:

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Արարատ Վարդանյան
Քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գարիկ Քեռյան